



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 12/18**

07.11.2018թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**), քննարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Մարիամ Ոսկանյանը (ներկայացուցիչ՝ փաստաբան Մամիկոն Մանուկյան, այսուհետ նաև՝ Դիմող) 13.08.2018թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներին համապատասխանելու, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանելու հարցը:

Դիմողի հիմնավորումները մասնավորապես հանգում են հետևյալին.

Ըստ դիմողի՝ իր և ամուսնու համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված անշարժ գույքը՝ բնակարանը, առանց իր իմացության և համաձայնության գրավադրվել է, ինչի հետևանքով ինքն արտադատական կարգով և իր կամքից անկախ զրկվել է իր սեփականություն հանդիսացող գույքից:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշման և Սահմանադրական դատարանի 24.02.2012թ. ՍԴՈ-1009 որոշման միջև առկա հակասությունը չի հաղթահարվել, ինչի արդյունքում վիճարկվող նորմը իր նկատմամբ կիրառվել է Սահմանադրությանը և Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1009 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին հակասող մեկնաբանությամբ:

Մասնավորապես, ըստ Դիմողի՝ ՀՀ վճռաբեկ դատարանը քննարկվող նորմի առնչությամբ ձևավորել է համատեղ սեփականատիրոջ համաձայնության և մյուս

սեփականատիրոջ մոտ գործարք կնքելու իրավունքի առկայության կանխավարկածներ, որոնք ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից որոշ դեպքերում համարվել են անընդունելի: Նման դեպքերի շարքին ՀՀ Սահմանադրական դատարանն, ի թիվս այլի, դասել է այն դեպքերը, երբ համատեղ սեփականատիրոջ սեփականության իրավունքը ծագել է օրենքի ուժով և պետական գրանցում չի ստացել:

Մինչդեռ, ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից նման մոտեցում ցուցաբերելուց հետո ՀՀ Վճռաբեկ դատարանը շարունակել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառել Սահմանադրական դատարանի դիրքորոշմանն ու ՀՀ Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ՝ ըստ էության անտեսելով տվյալ նորմի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումը:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումների միջև առկա հակասության պայմաններում իրավունքի սուբյեկտները դրսևորում են իրավաչափ վարքագծի անորոշություն, որով պայմանավորված՝ առկա է նշյալ նորմի վերստին ուսումնասիրման, քննարկման և հստակեցման անհրաժեշտություն:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը ՀՀ սահմանադրական դատարանին խնդրել է որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներին համապատասխանելու, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանելու հարցը:

ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմի 31.08.2018թ. թիվ ՍԴԴԿՈ/Ժ-1 որոշմամբ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանելու հարցի վերաբերյալ մասով Դիմողի գործի քննության ընդունումը մերժվել է, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներին համապատասխանելու մասով՝ ընդունվել քննության:

Սույն գործով ՀՀ սահմանադրական դատարանում գործի քննությունը նշանակված է 2018թ. նոյեմբերի 13-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Վիճարկվող քաղաքացիաիրավական նորմի բովանդակությունը հետևյալն է.

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 198.

...

3. Համարել սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Համարել սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝

ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների պահանջով՝ գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

Համաձայն նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝

1. Համապետել սեփականության մասնակիցները միասին տիրապետում և օգտագործում են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:

2. Համապետել սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը:

Հարկ է նշել, որ վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտվել է ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշմամբ, որով նշված դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն վիճահարույց է համարվել նույն նորմի կիրառման դատական պրակտիկան: Մասնավորապես, համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 24.02.2012թ. ՍԴՈ-1009 որոշման՝ «...ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այդ մասի առաջին նախադասության դրույթների սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ համապետել սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ՝ նկատի ունենալով, որ ներքոհիշյալ դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս **անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի պոզիտիվ համաձայնությունը**, ինչը կփաստի գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը:

Այդ դեպքերն են.

ա) երբ համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել և սեփականության իրավունքի գրանցման վկայականում հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համասեփականության իրավունքով,

բ) երբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունք՝ ներքև և սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից»:

Դատական պրակտիկայում, սակայն, ինչն արձանագրվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշման մեջ, այլ մոտեցում է դրսևորվում՝ նկատի ունենալով համասեփականատերերից մեկին օրենքի ուժով տրված լիազորությունը՝ միայնակ գույքի օտարման գործարք կնքելու առնչությամբ: Ընդ որում, այստեղ նույնպես տեղ են գտել միմյանցից տարբերվող իրավական դիրքորոշումներ:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում մի դեպքում շեշտվում է, որ «...համասեփականատերերից որևէ մեկի անհամաձայնության բացակայությունը վկայում է վերջինիս համաձայնության և գործարքը կնքող համասեփականատիրոջ մոտ գործարք կնքելու իրավունքի առկայության մասին», կամ այլ կերպ՝ ընդհանուր գույքը տնօրինելիս գործում է «...համասեփականատերերի համաձայնության և դրա տնօրինման գործարք կնքող անձի մոտ գործարքը կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը» (օր.՝ թիվ ԵԱԲԴ/1023/02/10 քաղաքացիական գործով 27.12.2011թ. որոշումը): Մեկ այլ դեպքում տրվում է հետևյալ դիրքորոշումը, որ համատեղ սեփականություն հանդիսացող ընդհանուր գույքը տնօրինելու ժամանակ առկա է «... **մյուս համասեփականատերերի համաձայնության և դրա տնօրինման իրավունքի առկայության կանխավարկածը**» (թիվ ԵԱԲԴ/0275/02/08 քաղաքացիական գործով 18.09.2009թ. որոշումը): Ակնհայտ է, որ այս ձևակերպումների սահմանադրաիրավական բովանդակությունները տարբեր են: Եթե առաջին դեպքում շեշտվում է «**գործարքը կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը**», ապա երկրորդ դեպքում եզրահանգումը վերաբերում է համատեղ սեփականատերերից մեկի մոտ «... **տնօրինման իրավունքի առկայության**» կանխավարկածին:

2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն ուղղակիորեն արձանագրել է.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ համատեղ սեփականության փաստն ինքնին չի կարող ենթադրել համասեփականատերերից յուրաքանչյուրի մոտ համատեղ գույքը հայեցողաբար տնօրինելու լիազորության առկայություն: Նման կանխավարկածը բոլոր այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով նախատեսված կարգին համապատասխան որոշված է համասեփականատերերի կոնկրետ շրջանակը, կամ նրանք որպես այդպիսին ճանաչվել են օրենքի ուժով, իրավակիրառական պրակտիկայում պետք է բացառել, նկատի ունենալով.

ա) նման կանխավարկածն առաջին հերթին հակասում է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուրի իրավունքն է **իր հայեցողությամբ** փորձապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Այդ **հայեցողությունն** ունի սուբյեկտիվ բնույթ, պետք է դրսևորվի րվյալ անձի կամաարտահայտմամբ: Միաժամանակ, օրենքով են նախատեսվում սեփականության օտարման, սեփականությունից զրկելու և սեփականության իրավունքից օգտվելու բացառիկ այն դեպքերը, որոնք բխում են Սահմանադրության վերոհիշյալ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերից: Սեփականության իրավունքի իրացման այլ պայման նախատեսելը, քան նախատեսված է Սահմանադրության 31-րդ հոդվածում, անխուսափելիորեն կհանգեցնի այդ իրավունքի արգելափակման: Մյուս կողմից՝ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության պոզիտիվ պարտականությունն է երաշխավորել, ապահովել ու պաշտպանել սեփականության իրավունքը՝ դրա համար ստեղծելով իրավական անհրաժեշտ նախադրյալներ,

բ) վերոնշյալ սահմանադրաիրավական պահանջներից ելնելով է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի թե՛ 1-ին, թե՛ 2-րդ և թե՛ 3-րդ մասերում սեփականության իրավունքի իրավակարգավորման հիմքում դրել է **համապեղ սեփականության մասնակիցների կամաարտահայտությունը՝ նրանց համաձայնության առկայությունը՝** նկատի ունենալով սեփականություն հանդիսացող գույքը երկու կամ ավելի անձանց ընդհանուր սեփականության իրավունքով պարկանելու իրավաբանական փաստը,...

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակության և դատական պրակտիկայում դրա կիրառման կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի իրարամերժ դիրքորոշումների առկայության պայմաններում վտանգվում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պատշաճ իրացումը, ինչն իր հերթին հանգեցնում է անձի սեփականության, ինչպես նաև դատական պաշտպանության իրավունքի խախտման:

Իրավական որոշակիության սկզբունքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:²

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

² ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

Բացի այդ, դատական պրակտիկայում միևնույն քաղաքացիաիրավական դրույթի տարրնկալումը և իրավակիրառական պրակտիկայի անորոշությունը հանգեցնում է նաև իրավահավասարության սկզբունքի՝ ՀՀ սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածների խախտման:

ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝

Բոլորը հավասար են օրենքի առջև:

Համաձայն 29-րդ հոդվածի՝

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Նշված սահմանադրական նորմերն ամրագրում են օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքը, որը նշանակում է՝ «միևնույն կատեգորիայի» անձանց նկատմամբ տարբերությունների բացառում և «հավասար պայմանների առկայության դեպքում մարդկանց հավասար վիճակ»:¹

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է համարվում 14-րդ հոդվածի նպատակների համար, եթե այն չունի որեւէ օբյեկտիվ եւ ողջամիտ արդարացում, այն է՝ եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, կամ եթե կիրառվող միջոցների եւ հետապնդվող նպատակի միջև չկա համամասնության ողջամիտ հարաբերակցություն (Սահին ընդդեմ Գերմանիայի (Sahin v. Germany), 2003թ. հուլիսի 08-ի վճիռը):

Ասվածը նշանակում է, որ միևնույն քաղաքացիաիրավական նորմի վերաբերյալ վճռաբեկ և սահմանադրական դատարանների կողմից տրված տարբեր մեկնաբանությունների գոյությունը դատական պրակտիկայում դատարաններին հնարավորություն է տալիս «միևնույն կատեգորիայի» անձանց նկատմամբ կամայականորեն ցուցաբերելու տարբերակված մոտեցում՝ համատեղ սեփականության մասնակիցների միջև գույքի տնօրինման գործարքներ իրականացնելիս ծագած վեճի լուծման գործընթացում՝ հանգեցնելով անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման:

Չնայած վիճարկվող դրույթի սահմանադրականությունն արդեն իսկ քննարկվել է ՀՀ սահմանադրական դատարանի 2012թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշմամբ, այնուամենայնիվ, դատական պրակտիկայում միևնույն դրույթի հակասական կիրառությունը, ինչպես նաև այն, որ դատարանների կողմից ըստ էության չի իրացվում ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ընդհանրապես սահմանադրական դատարանի որոշումների իրացման խնդիրը դատական իրավակիրառական պրակտիկայում:

ՀՀ Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

¹ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջ 174-175:

1. Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը:

ՀՀ Սահմանադրության 170-րդ հոդվածի համաձայն՝

1. Սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ և եզրակացություններ:

2. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:...

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի համաձայն՝

4. Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ.

1. Իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան:

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝

10. Սույն հոդվածում նշված գործերով՝ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմին տրված մեկնաբանությունը սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում այդ նորմը չի կարող շարունակել կիրառվել այնպիսի մեկնաբանությամբ, որն արդեն իսկ ճանաչվել է հակասահմանադրական: ՀՀ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից վիճարկվող նորմը ենթակա է կիրառման ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանված մեկնաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ սահմանադրական դատարանի 24.02.2012թ. ՍԴՈ-1009 որոշմանը շարունակում է խնդրահարույց մնալ:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան